

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԱՄՓՈՓ  
Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

<b>Հաշվետվության բովանդակությունը</b>		<b>Էջը</b>
1.	<b>ՀՀ կրթության պետական տեսչության 2016 թվականի գործունեությունը</b>	<b>1</b>
2.	<b>Ստուգումներ</b>	<b>6</b>
	2.1. Հանրակրթություն 2.2. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն	<b>13</b>
3.	<b>Ուսումնասիրություններ</b>	<b>16</b>
	3.1. Հանրակրթություն	<b>20</b>
	3.2. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն	<b>21</b>
	3.3. Դրսեկության ձևով (էքստեռն) ավարտական քննությունների կազմակերպման և անցկացման գործընթացի նկատմամբ վերահսկողություն	<b>21</b>
	3.4. ՀՀ Արարատի, Լոռու, Տավուշի մարզպետարանների աշխատակազմերի կրթության, մշակույթի և սպորտի վարչություններ	<b>23</b>
3.5. ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակի, ՀՀ Շիրակի մարզի Արթիկի, ՀՀ Լոռու մարզի Վանաձորի, ՀՀ Սյունիքի մարզի Կապանի, Մեղրիի, Քաջարանի, Ագարակի, ՀՀ Արմավիրի մարզի Էջմիածնի քաղաքապետարանների աշխատակազմերի կրթության հարցերով զբաղվող ստորաբաժանումներ	<b>29</b>	
4.	<b>Դիտարկումներ</b>	<b>29</b>
5.	<b>Մշտադիտարկում</b>	<b>29</b>
6.	<b>Դիմումներ, բողոքներ: Ուսումնասիրություններ ՀՀ մարզերում և Երևան քաղաքում</b>	<b>30</b>

**1. ՀՀ կրթության պետական տեսչության 2016 թվականի գործունեությունը**

ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի կրթության պետական տեսչությունը (այսուհետ՝ Տեսչություն) գործում է «Կրթության պետական տեսչության մասին», «Կրթության մասին» ՀՀ օրենքներով, ՀՀ կրթության և գիտության նախարարության կանոնադրության և իր կանոնադրության հիման վրա:

Տեսչությունն իր գործունեության ընթացքում առաջնորդվում է ՀՀ Սահմանադրությամբ, «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին», «Նախադպրոցական կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Կրթության մասին», «Նախնական և միջին մասնագիտական կրթության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքներով, ՀՀ աշխատանքային օրենսգրքով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, այլ իրավական ակտերով:

Տեսչությունն իր գործունեությունն իրականացրել է՝ հիմք ընդունելով ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանով հաստատված տեսչության 2016թ. աշխատանքային ծրագիրը և Տեսչության պետի՝ ՀՀ կրթության գլխավոր պետական տեսուչի կողմից հաստատված ստուգումների ժամանակացույցը՝ ելնելով Տեսչության գործունեության հետևյալ հիմնական սկզբունքներից.

- ✓ մարդու և քաղաքացու իրավունքների ու հիմնարար ազատությունների պաշտպանության առաջնահերթություն.
- ✓ գործունեության օրինականություն, թափանցիկություն և հրապարակայնություն.
- ✓ կրթության բնագավառի օրենսդրության միատեսակ և անկողմնակալ կիրառման ապահովում.
- ✓ ծրագրային գործողությունների իրականացում՝ ըստ գերակա ուղղությունների և առաջնայնությունների.
- ✓ կրթության որակի ապահովում տարածքային կառավարման մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և ուսումնական հաստատությունների հետ համագործակցելու և օժանդակելու միջոցով:

Իրականացվող գործընթացների թափանցիկությունն ապահովելու նպատակով Տեսչությունում գործում է համակարգչային ներքին ցանց, որտեղ զետեղված տեղեկատվությունը մատչելի է բոլոր տեսուչների համար:

Տեսուչների մասնակցությամբ պարբերաբար տեղի են ունենում բաց քննարկումներ, խորհրդակցություններ, զեկույցներ, սեմինարներ:

## Գործողություններ

Տեսչության կողմից 2016 թվականի ընթացքում իրականացված ստուգումների, ուսումնասիրությունների և մշտադիտարկումների արդյունքների հիման վրա կազմվել են՝

- ✓ **հաշվետվություններ,**
- ✓ **վերլուծություններ,**
- ✓ **ակտեր,**
- ✓ **արձանագրություններ,**
- ✓ **տեղեկանքներ,**
- ✓ **եզրակացություններ,**
- ✓ **զեկուցագրեր,**
- ✓ **զեկույցներ,**
- ✓ **գրություններ:**

Բացահայտված խախտումների հետևանքների և թերությունների վերացմանն ուղղված կամ ուսումնական հաստատության զարգացմանը նպաստող՝ **կատարման համար պարտադիր հանձնարարականներ են տրվել** ուսումնական հաստատությունների կառավարման մարմիններին (տնօրեններին և խորհուրդների նախագահներին), ինչպես նաև, ըստ ուսումնական հաստատությունների ենթակայության, **առաջարկություններ են ներկայացվել**

լիազորված պետական և (կամ) տեղական ինքնակառավարման մարմիններին, ուսումնական հաստատությունների հիմնադիրներին:

2016թ. Տեսչությանը հասցեագրվել է 407 (մտից) գրություն (2015թ.՝ 292, 2014թ.՝ 334, 2013թ.՝ 366, 2012թ.՝ 393), որից 47-ը կազմել են քաղաքացիների դիմումներն ու բողոքները (2015թ.՝ 19-ը, 2014թ.՝ 26, 2013՝ 34, 2012 թ.՝ 67):

Տեսչության ելից գրությունների թիվը կազմել է 414 (2015՝ 262, 2014՝ 461, 2013՝ 357, 2012՝ 293):

Տեսչության պետն իր իրավասության սահմաններում արձակել (տվել) է՝  
 68 կարգադրություն,  
 16 ստուգման հանձնարարագիր,  
 կատարման համար պարտադիր 189 հանձնարարական:

**Գրություններ (զեկուցագրեր) են ուղարկվել՝**

ՀՀ կառավարության աշխատակազմ	19
ՀՀ կրթության և գիտության նախարարություն	136
ՀՀ արդարադատության նախարարություն	2
ՀՀ սիյուռքի նախարարություն	1
ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն	2
ՀՀ ֆինանսների նախարարություն	1
ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչություն	2
ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին	1
ՀՀ մարզպետարաններ	19
ՀՀ գլխավոր դատախազություն	2
Երևանի քաղաքապետարան	4
Երևան քաղաքի Արաբկիրի վարչական շրջան	1
Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջան	1
ՀՀ Լոռու մարզի Վանաձորի քաղաքապետարան	1
ՀՀ Արմավիրի մարզի Էջմիածնի քաղաքապետարան	1
ՀՀ Շիրակի մարզի Արթիկի քաղաքապետարան	1
ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակի քաղաքապետարան	1
ՀՀ Սյունիքի մարզի Կապանի քաղաքապետարան	1
ՀՀ Սյունիքի մարզի Մեղրիի քաղաքապետարան	1
ՀՀ Սյունիքի մարզի Ագարակի քաղաքապետարան	1
ՀՀ Սյունիքի մարզի Քաջարանի քաղաքապետարան	1
Կրթության ազգային ինստիտուտ	4
Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն	1
Ուսումնական հաստատությունների տնօրեններին	173
ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե	1
ՀՀ քննչական կոմիտե	1
ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտ	1
ՀՀ քննչական կոմիտե Շիրակի մարզային քննչական վարչություն Արթիկի քննչական բաժին	1

«Ապագան քոնն է» բարեգործական սոցիալական ՀԿ	1
Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակառույցիոն կենտրոն ՀԿ	1
Քաղաքացիների	31
Ընդամենը	414

Տեսչության կողմից իրականացրած ուսումնասիրությունների և ստուգումների աշխարհագրական բաշխվածությունը.



- 1 Ստուգումներ ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում,
- 2 Ստուգումներ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի նախադպրոցական կրթական ծրագրեր իրականացնող թվով 93 ուսումնադաստիարակչական հաստատություններում,
- 3 Կրթական գործունեության ուսումնասիրություններ ՀՀ Շիրակի և ՀՀ Սյունիքի մարզերի թվով 70 հանրակրթական ուսումնական հաստատություններում,

4 ՀՀ երկրորդ և երրորդ աստիճանի հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 9-րդ և 12-րդ դասարանների սովորողների ավարտական և պետական ավարտական քննությունների անցկացման, գրավոր աշխատանքների ստուգման ընթացքի վերահսկողություն,

5 Ուսումնասիրություններ ՀՀ թվով 25 նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատություններում,

6 Ուսումնասիրություն ՀՀ Արարատի, Տավուշի և Լոռու մարզպետարանների կրթության, մշակույթի և սպորտի վարչություններում,

7 Ուսումնասիրություններ ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակի, ՀՀ Շիրակի մարզի Արթիկի, ՀՀ Լոռու մարզի Վանաձորի, ՀՀ Սյունիքի մարզի Կապանի, Մեղրիի, Քաջարանի, Ագարակի, ՀՀ Արմավիրի մարզի Էջմիածնի քաղաքապետարանների աշխատակազմերի կրթության հարցերով զբաղվող ստորաբաժանումներում,

8 Դիտարկումներ,

9 Մշտադիտարկումներ:

Գործունեության թափանցիկության, հաշվետվողականության և հրապարակայնության ապահովման նպատակով Տեսչությունը համագործակցել է զանգվածային լրատվամիջոցների հետ.

- ✓ Ուսումնասիրությունների արդյունքում կազմված վերլուծությունները, հաշվետվությունները (տեղեկանքները) հրապարակվել են «Կրթություն» շաբաթաթերթում:
- ✓ Տեսչության 2016թ. տարեկան ստուգումների և աշխատանքային ծրագրերը, ամենամյա գործողությունների ժամանակացույցները հրապարակվել են [www.edu.am](http://www.edu.am) կայքում:

**Տեսչության կողմից իրականացված թեմատիկ ստուգումներից, տեսչավորումներից, ուսումնասիրություններից, մշտադիտարկումներից, դիտարկումներից բացի՝ իրականացվել են նաև հետևյալ գործողությունները**

N	Աշխատանքի անվանումը	Նպատակը
1.	Կազմվել է Տեսչության 2015թ. տարեկան հրապարակային հաշվետվությունը և ներկայացվել հրապարակման:	«Կրթության պետական տեսչության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի պահանջի կատարում
2.	Կազմվել են Տեսչության 2016թ. կիսամյակային հաշվետվությունը և տարեկան հաշվետվության նախագիծը: Կիսամյակային հաշվետվությունը հրապարակվել է:	«Կրթության պետական տեսչության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի պահանջի կատարում
3.	Կազմվել է Տեսչության 2017թ. աշխատանքային ծրագիրը:	«Կրթության պետական տեսչության

	Ծրագիրը հաստատվել է ՀՀ ԿԳ նախարարի կողմից:	մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջի կատարում
4.	Կազմվել է Տեսչության 2017թ. ստուգումների ժամանակացույցը: Ստուգումների ժամանակացույցը հաստատվել է ՀՀ կրթության գլխավոր պետական տեսուչի կողմից:	«Կրթության պետական տեսչության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջի կատարում
5.	I և II կիսամյակներում կազմվել և հրապարակման է ներկայացվել կրթության բնագավառում առկա վիճակի, դրա առանձին բնութագրիչների, կրթության ցուցանիշերի մասին հաշվետվություն:	«Կրթության պետական տեսչության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջի կատարում
6.	I և II կիսամյակներում կազմվել և հրապարակման են ներկայացվել ուսումնական հաստատությունների կրթական ծառայությունների արդյունավետության գնահատման, գործունեության մասին վերլուծություններ:	«Կրթության պետական տեսչության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջի կատարում

## 2. Ստուգումներ

N	Ուսումնական հաստատությունը	Ստուգման առարկան
1.	ՀՀ մարզերի նախադպրոցական կրթական ծրագրեր իրականացնող թվով 53 ուսումնադաստիարակչական հաստատություններ	Ստուգումներ՝ ուսումնական հաստատությունների կրթական գործունեության ռիսկայնությունը վերլուծելու, գնահատելու, ինչպես նաև տվյալների բազա ձևավորելու նպատակով (հիմք՝ ՀՀ կառավարության 2013 թվականի հունիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմի կրթության պետական տեսչության՝ ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը և ստուգումների ստուգաթերթերը հաստատելու մասին» N 598-Ն որոշումը):
2.	Երևանի Արաբկիր, Քանաքեռ-Զեյթուն և Էրեբունի վարչական շրջանների նախադպրոցական կրթական ծրագրեր իրականացնող թվով 40 ուսումնադաստիարակչական հաստատություններ	
3.	ՀՀ Շիրակի մարզի Ամասիայի, Գյումրու հ. 4, ՀՀ Լոռու մարզի Վանաձորի հ. 1, ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավանի, Նաիրիի, Երևանի զարդակիրառական արվեստի արհեստագործական պետական ուսումնարաններ	

### 2.1. Հանրակրթություն

#### 1) Ստուգումներ ՀՀ մարզերի նախադպրոցական կրթական ծրագրեր իրականացնող թվով 53 ուսումնադաստիարակչական հաստատություններում

2016թ. փետրվարի 22-ից մայիսի 14-ը և նոյեմբերի 7-ից 18-ը ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակի, Շիրակի մարզի Արթիկի, Լոռու մարզի Վանաձորի, Սյունիքի մարզի Կապանի, Քաջարանի, Մեղրիի, Ագարակի և Արմավիրի մարզի Էջմիածնի ընդհանուր թվով 53 նախադպրոցական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնադաստիարակչական հաստատությունների կրթական գործունեության ռիսկայնությունը վերլուծելու, գնահատելու, ինչպես նաև տվյալների բազա ձևավորելու նպատակով իրականացվել են ստուգումներ:

Ստուգումների արդյունքում 53 նախադպրոցական ուսումնական հաստատություններից 52-ում հայտնաբերվել են կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների կատարման խախտումներ, որոնց վերաբերյալ կազմվել է 52 ակտ:

Համաձայն «Կրթության պետական տեսչության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ մանկապարտեզների տնօրեններին ստուգման արդյունքում հայտնաբերված խախտումների հետևանքները վերացնելու նպատակով տրվել են կատարման համար պարտադիր հանձնարարականներ: ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակի, Շիրակի մարզի Արթիկի, Լոռու մարզի Վանաձորի, Սյունիքի մարզի Կապանի, Քաջարանի, Մեղրիի, Ագարակի մանկապարտեզներում իրականացված ստուգումների արդյունքների ամփոփ պատկերը ներկայացվել է ՀՀ կրթության պետական տեսչության 2016թ. առաջին կիսամյակի գործունեության վերաբերյալ հաշվետվությունում ([www.edu.am](http://www.edu.am)):

Ստուգումների արդյունքում ՀՀ Արմավիրի մարզի Էջմիածին քաղաքի բոլոր 8 մանկապարտեզներում հայտնաբերվել են կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների կատարման խախտումներ, որոնց վերաբերյալ կազմվել է 8 ակտ:

**Ըստ ստուգաթերթերի ամփոփ տվյալների մանկապարտեզների կրթական գործունեության ռիսկերն ունեն հետևյալ պատկերը.**

h/h	Մանկապարտեզի կրթական գործունեության ռիսկն ըստ ստուգաթերթերի (միավոր)	Մանկապարտեզի անվանումը
1.	4,5	Էջմիածնի թիվ 13 «Ծիծեռնակ» մանկապարտեզ
2.	5	Էջմիածնի թիվ 15 «Զվարթնոց» մանկապարտեզ
3.	7,5	Էջմիածնի թիվ 5 «Գարուն» մանկապարտեզ
4.	7,5	Էջմիածնի թիվ 16 «Ոստան» մանկապարտեզ
5.	8,5	Էջմիածնի թիվ 11 «Հասմիկ» մանկապարտեզ
6.	10,5	Էջմիածնի թիվ 14 «Ձնծաղիկ» մանկապարտեզ
7.	11	Էջմիածնի թիվ 10 «Շուշան» մանկապարտեզ
8.	13,6	Էջմիածնի թիվ 6 «Արևիկ» մանկապարտեզ

**Մանկապարտեզների ստուգման արդյունքում արձանագրվել են հետևյալ բնույթի խախտումներ.**

h/h	Խախտման բնույթը	Մանկապարտեզի անվանումը
1.	Մանկապարտեզը չունի նախադպրոցական կրթական ծրագիր իրականացնելու լիցենզիա	Էջմիածնի թիվ 8 մանկապարտեզներ
2.	ՆՈՒՀ-ի կանոնադրությունը չի համապատասխանում օրինակելի կանոնադրության պահանջներին	Էջմիածնի թիվ 8 մանկապարտեզներ
3.	Մանկապարտեզների հասարիքացուցակով և պաշտոնային դրույքաչափերով մանակավարժական աշխատողներին հարկացվել է (կամ չի հարկացվել) սահմանված նորմից պակաս հասարիքային միավոր	Էջմիածնի թիվ 8 մանկապարտեզներ
4.	Խմբերի գերբեռնվածություն	Էջմիածնի թիվ 6 «Արևիկ», թիվ 10 «Շուշան» մանկապարտեզներ
5.	Մանկավարժական աշխատողների	Էջմիածնի թիվ 5 «Գարուն» (1), թիվ 6 «Արևիկ» (1), թիվ 10

	<i>նշանակում</i>	<i>«Շուշան» (1), թիվ 11 «Հասմիկ» (1), թիվ 14 «Ձնծաղիկ» (3), թիվ 16 «Ոստան» (1) մանկապարտեզներ</i>
6.	<i>Մանկավարժական աշխատողների վերապատրաստում վերջին 5 տարիների ընթացքում</i>	<i>Էջմիածնի թիվ 5 «Գարուն» (3), թիվ 6 «Արևիկ» (2), թիվ 10 «Շուշան» (3), թիվ 11 «Հասմիկ» (3), թիվ 13 «Ծիծեռնակ» (4) մանկապարտեզներ</i>
7.	<i>Մանկապարտեզի խմբերում ընդգրկված երեխաների համար, որոնց տարիքները չեն համապատասխանում տվյալ տարիքային խմբին, չափորոշիչի համապատասխան որակական պահանջների սահմանում, տարբերակված ուսուցման իրականացում</i>	<i>Էջմիածնի թիվ 7 մանկապարտեզներ (բացառությամբ Էջմիածնի թիվ 13 «Ծիծեռնակ» մանկապարտեզի)</i>
8.	<i>Պարապմունքների անցկացման ժամանակացույցի կազմման և (կամ) ծրագրային նյութերին ներկայացվող պահանջների ապահովում</i>	<i>Էջմիածնի թիվ 13 «Ծիծեռնակ», թիվ 14 «Ձնծաղիկ» մանկապարտեզներ</i>
9.	<i>Նախադպրոցական կրթության պեղական կրթական չափորոշիչներով սահմանված՝ 3-ից մինչև 6 տարեկան երեխաների զարգացնող միջավայրին՝ էկոլոգիական կուլտուրային, ներկայացվող պահանջների ապահովում</i>	<i>Էջմիածնի թիվ 6 «Արևիկ» մանկապարտեզ</i>

Ստուգումների արդյունքները ներկայացվել են ՀՀ կրթության և գիտության նախարարին, ՀՀ տարածքային կառավարման նախարարին, ՀՀ Արագածոտնի, Շիրակի, Լոռու, Սյունիքի, Արմավիրի մարզպետներին, Աշտարակի, Արթիկի, Վանաձորի, Կապանի, Քաջարանի, Ագարակի, Մեղրիի, Էջմիածնի քաղաքապետներին:

### Հեղադարձ կապ

ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ քաղաքի մանկապարտեզների տնօրեններից ստացված կատարողականների և հանձնարարականների համադրման արդյունքները ներկայացվել են ՀՀ կրթության պետական տեսչության 2016թ. առաջին կիսամյակի գործունեության վերաբերյալ հաշվետվությունում ([www.edu.am](http://www.edu.am)): ՀՀ Արմավիրի մարզի Էջմիածին քաղաքի մանկապարտեզների տնօրեններից ստացվող կատարողականները ամփոփման փուլում են: ՀՀ Շիրակի մարզի Արթիկի, Լոռու մարզի Վանաձորի, Սյունիքի մարզի Կապանի, Քաջարանի, Մեղրիի, Ագարակի մանկապարտեզների տնօրեններից ստացված կատարողականների և հանձնարարականների համադրման արդյունքները ներկայացվում են ստորև.

h/h	Խախտման բնույթը	Տնօրենին տրված հանձնարարականը կատարված է (նախադպրոցական ուսումնական հաստատությունը)	Տնօրենին տրված հանձնարարականը կատարված չէ (նախադպրոցական ուսումնական հաստատությունը)
1.	Հաստատությունը չունի կրթական գործունեության	Կապանի թիվ 12 մանկապարտեզներ	Ագարակ քաղաքի հ.1, Քաջարանի հ. 1, Մեղրի, Արթիկ քաղաքների, Վանաձորի



	թույլտվություն՝ լիցենզիա		հ.հ. 2, 3, 4, 5, 7, 8, 10, 11, 15, 19, 24, 28, 30, 31, 32, 33, 34, 35, 40, 41 մանկապարտեզներ
2.	Մանկապարտեզի կանոնադրությունը չի համապատասխանում օրինակելի կանոնադրությանը	Ագարակ քաղաքի թիվ 1, Արթիկ քաղաքի մանկապարտեզներ	Մեղրիի, Վանաձորի հ.հ. 2, 3, 4, 5, 7, 10, 11, 15, 19, 24, 28, 30, 31, 32, 33, 34, 35, 40, 41 մանկապարտեզներ
3.	Հաստիքային միավորների անհամապատասխանություն	Վանաձորի հ. հ. 2, 3, 4, 5, 7, 8, 10, 11, 15, 19, 24, 28, 30, 31, 32, 33, 34, 40, 41 մանկապարտեզներ	Վանաձորի հ. 35, Կապանի հ.հ. 1, 2, 4, 5, 6, 7, 8, 9, 10, 12, Քաջարանի հ. 1, Մեղրի, Արթիկ քաղաքների մանկապարտեզներ, Ագարակ քաղաքի հ. 1 մանկապարտեզ (պարուսույց)
4.	Մեթոդիստի որակավորման պահանջի անհամապատասխանություն		Մեղրի քաղաքի Քաջարանի հ. 1, Ագարակ քաղաքի հ. 1 մանկապարտեզներ
5.	Դաստիարակի որակավորման պահանջի անհամապատասխանություն	Կապանի հ. 1 (2), Կապանի հ. 2 (2), Կապանի հ. 7 (5), Կապանի հ. 8 (3), Կապանի հ. 9 (3), Կապանի հ. 13 (2), Արթիկի հ. 2 (1), Արթիկի հ. 3 (1), Արթիկի հ. 4 (1), Վանաձորի հ. 33 (3) մանկապարտեզներ	Կապանի հ. 4 (մեկ դաստիարակը ազատվել է, իսկ նոր նշանակման վերաբերյալ տեղեկատվություն չի ներկայացվել), Կապանի հ. 13 (մեկ դաստիարակ շարունակում է աշխատել, 3-ը ազատվել են աշխատանքից. սակայն նոր նշանակումների մասին տեղեկատվություն չի ներկայացվել), Մեղրի քաղաքի մանկապարտեզ (7), Քաջարանի հ. 1 մանկապարտեզ (2, որից 1-ը ազատվել է աշխատանքից, սակայն նոր նշանակման համար տեղեկատվություն չի ներկայացվել), Ագարակ քաղաքի հ. 1 (4), Արթիկի հ. 1 (2), Արթիկի հ. 3 (1), Վանաձորի հ. հ. 7 (1), 10 (1), 31 (2) մանկապարտեզներ
6.	Պարուսույցի, հոգեբանի, լոգապեդի, լրացուցիչ կրթության մանկավարժի որակավորման պահանջի անհամապատասխանություն		Մեղրի քաղաքի մանկապարտեզ (1-ական)
7.	Խմբերի գերբեռնվածություն	Կապանի հ.հ. 7, 8, 13 , Արթիկի հ.հ. 2, 3, 4, Վանաձորի հ. հ. 3, 8, 11, 19, 34, 35, 40 մանկապարտեզներ	Վանաձորի հ.հ. 2, 5, 24, Արթիկի հ. 1, Վանաձորի հ. հ. 10, 15, 30, 32, Մեղրի քաղաքի մանկապարտեզներ
8.	Տարատարիք խմբում չափորոշի որակական պահանջների ապահովում	Արթիկի հ.հ. 1, 2, 3, 4, Վանաձորի հ. հ. 15, 33, 34 մանկապարտեզներ	Վանաձորի հ. 7 մանկապարտեզ
9.	Ավագ խմբում ընդգրկված է դպրոցահասակ երեխա	Արթիկի հ.հ. 1, 2, 3, 4, Վանաձորի հ.հ. 3, 4 մանկապարտեզներ	
10.	Զարգացնող միջավայր	Վանաձորի հ. 7 մանկապարտեզ	

**2) Ստուգումներ Երևանի Արաբկիր, Էրեբունի և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների նախադպրոցական կրթական ծրագրեր իրականացնող թվով 40 ուսումնադաստիարակչական հաստատություններում**

2016թ. մարտի 14-25-ը, ապրիլի 25-ից մայիսի 13-ը և հոկտեմբերի 10-ից նոյեմբերի 4-ը համապատասխանաբար Երևանի Արաբկիր, Էրեբունի և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների նախադպրոցական կրթական ծրագրեր իրականացնող թվով 40 ուսումնադաստիարակչական հաստատություններում իրականացվել են ստուգումներ՝ կրթական գործունեության ռիսկայնությունը վերլուծելու, գնահատելու, ինչպես նաև տվյալների բազա ձևավորելու նպատակով:

Ստուգումների արդյունքում մանկապարտեզներից 37-ում հայտնաբերվել են կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների կատարման խախտումներ, որոնց վերաբերյալ կազմվել է 37 ակտ: Հայտնաբերված խախտումների հետևանքները վերացնելու նպատակով ՀՀ կրթության գլխավոր պետական տեսուչի կողմից մանկապարտեզների տնօրեններին տրվել են կատարման համար պարտադիր հանձնարարականներ:

Երևանի Արաբկիր, Էրեբունի վարչական շրջանների նախադպրոցական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնադաստիարակչական հաստատություններում իրականացված ստուգումների արդյունքների ամփոփ պատկերը ներկայացվել է ՀՀ կրթության պետական տեսչության 2016թ. առաջին կիսամյակի գործունեության վերաբերյալ հաշվետվությունում ([www.edu.am](http://www.edu.am)):

Ստուգումների արդյունքում Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի 15 մանկապարտեզներից 14-ում հայտնաբերվել են կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների կատարման խախտումներ, որոնց վերաբերյալ կազմվել է 14 ակտ:

**Մանկապարտեզների կրթական գործունեության ռիսկերն՝ ըստ ստուգաթերթերի ամփոփ տվյալների (աղյուսակ 1):**

աղյուսակ 1

h/h	Մանկապարտեզի կրթական գործունեության ռիսկն ըստ ստուգաթերթերի (միավոր)	Մանկապարտեզի անվանումը
1.	0 (խախտումներ չեն արձանագրվել)	Երևանի հ. 157 մանկապարտեզ
2.	2	Երևանի հ.հ.148,149, 151,153, 160, 161,162 մանկապարտեզներ
3.	3,5	Երևանի հ.հ. 150, 158 մանկապարտեզներ
4.	4	Երևանի հ. 155, 159 մանկապարտեզ
5.	4,5	Երևանի հ. 154 մանկապարտեզ
6.	4,6	Երևանի հ. 156 մանկապարտեզ
7.	9,5	Երևանի հ. 152 մանկապարտեզ

Մանկապարտեզների ստուգման արդյունքում արձանագրված խախտումների բնույթներն ըստ մանկապարտեզների արտահայտված են աղյուսակ 2-ում.

Խախտման բնույթը	Նշված բնույթի խախտում կատարած մանկապարտեզների ընդհանուր թիվը	Մանկապարտեզի անվանումը
Պաշտոնային դրույքաչափերի անհամապատասխանություն. երաժշտության դաստիարակի, ֆիզկուլտուրայի հրահանգչի, պարուսույցի հաստիքային միավորները հատկացվել են սահմանվածից պակաս չափով	3 (20%)	1. Երևանի հ. 160 մանկապարտեզ (երաժշտ. 1,5-ի փոխարեն 1,25) 2. Երևանի հ. 161 մանկապարտեզ ( պար.1,0-ի փոխ.0,5), 3. Երևանի հ.162 մանկապարտեզ ( ֆիզկ.1,0-ի փոխ.0,5)
Պաշտոնային դրույքաչափը չի հատկացվել (ֆիզկուլտուրայի հրահանգիչ,պարուսույց)	14 (93%)	Երևանի հ.հ. 148, 149, 150, 151, 152 , 153, 154, 155, 156, 158 (պ.), 159, 160, 161 (ֆ.), 162 (պ.) մանկապարտեզներ
Մանկավարժական աշխատողների ընտրություն և նշանակում	2 (13%)	Երևանի հ.հ. 154, 158 մանկապարտեզներ
Խմբերի գերբեռնվածություն	14 (93%)	Երևանի հ.հ. 148, 149, 150, 151, 152, 153, 154, 155, 156, 158, 159, 160, 161, 162 մանկապարտեզներ
Մանկավարժական կադրերի մասնագիտական գիտելիքների կատարելագործման դասընթացներ, վերապատրաստման գործընթաց չի իրականացվել	2 (13%)	Երևանի հ.հ. 150, 154 մանկապարտեզներ
Մանկապարտեզի խմբերում ընդգրկված են երեխաներ, ովքեր չեն համապատասխանում տվյալ տարիքային խմբին	2 (13%)	Երևանի հ.հ. 155, 159 մանկապարտեզներ
Հաստատություն հաճախող երեխաների զարգացման, դաստիարակության, ուսուցման եւ առողջության ամրապնդման համար ապահովված չեն սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան պայմաններ	1 (6%)	Երևանի հ.152 մանկապարտեզ
Մանկապարտեզը չունի երաժշտական դահլիճ, մարզադահլիճ	2 (13%)	Երևանի հ.հ. 152 ,156 մանկապարտեզներ
Մանկապարտեզը չունի կրթական գործունեություն իրականացնելու թույլտվություն՝ լիցենզիա	2 (13%)	Երևանի հ.հ. 154, 159 մանկապարտեզներ
Խախտվել են ՀՀ ԿԳ նախարարի՝ համապատասխան հրամաններով տրված նախադպրոցական կրթության լիցենզիայի հավելվածով սովորողների համակազմի	5 (33%)	Երևանի հ.հ. 148, 149, 150, 158, 161 մանկապարտեզներ

Ստուգումների արդյունքները ներկայացվել են ՀՀ կրթության և գիտության նախարարին, Երևանի քաղաքապետին:

**Հեղադարձ կապ**

Համաձայն Երևանի քաղաքապետի տեղակալից ստացված գրությունների՝ մանկապարտեզների տնօրեններին տրվել են հանձնարարականներ, որոնց կատարումն ընթացքի մեջ է:

Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի մանկապարտեզների տնօրեններից ստացվող կատարողականներն ամփոփման փուլում են: Արաբկիր, Էրեբունի վարչական շրջանների մանկապարտեզների տնօրեններից ստացված կատարողականների և հանձնարարականների համադրման արդյունքները ներկայացվում են ստորև.

h/h	Խախտման բնույթը	Տնօրենին տրված հանձնարարականը կատարված է (նախադպրոցական ուսումնական հաստատությունը)	Տնօրենին տրված հանձնարարականը կատարված չէ (նախադպրոցական ուսումնական հաստատությունը), ըստ կատարողականի ընթացքի մեջ է
1.	Նախադպրոցական կրթության լիցենզիայի հավելվածով սահմանված սովորողների համակազմի սահմանային թվին	Երևանի հ. 64 մանկապարտեզ	Երևանի հ. հ. 26, 27, 32, 63, 66, 68, 71 մանկապարտեզներ
2.	Հաստիքային միավորների անհամապատասխանություն	Երևանի հ.հ. 64, 68, 71 մանկապարտեզներ	Երևանի հ. հ. 22, 24, 25, 27, 28, 29, 33, 34, 63, 66, 74, 75 մանկապարտեզներ
3.	Դաստիարակի որակավորման պահանջի անհամապատասխանություն	Երևանի հ. հ. 27 (ազատվել է), 30 մանկապարտեզներ	
4.	Երաժշտության դաստիարակի որակավորման պահանջի անհամապատասխանություն		Երևանի հ. 24 մանկապարտեզ
5.	Լրացուցիչ կրթության մանկավարժի որակավորման պահանջի անհամապատասխանություն	Երևանի հ.հ. 27, 33 մանկապարտեզներ (ազատվել է)	Երևանի հ. 25 մանկապարտեզ
6.	Ֆիզկուլտուրայի հրահանգչի որակավորման պահանջի անհամապատասխանություն	Երևանի հ. 26 մանկապարտեզ	
7.	Պարուսույցի որակավորման պահանջի անհամապատասխանություն	Երևանի հ. 27 մանկապարտեզ (ազատվել է)	
8.	Խմբերի գերբեռնվածություն	Երևանի հ. հ. 22, 26, 28, 29, 30, 33, 63, 64, 74, 75 մանկապարտեզ Երևանի հ.հ. 71, 72 մանկապարտեզ՝ մասամբ	Երևանի հ. հ. 23, 24, 25, 27, 32, 66, 67, 68, 73 մանկապարտեզներ
9.	Տարատարիք խմբում	Երևանի հ.հ. 22, 63	

	չափորոշի որակական պահանջների ապահովում	մանկապարտեզներ	
10.	Զարգացնող միջավայր	Երևանի հ. 24 մանկապարտեզ	

## 2.2. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն

**Ստուգումներ ՀՀ Շիրակի մարզի Ամասիայի, Գյումրու հ. 4, ՀՀ Լոռու մարզի Վանաձորի հ. 1, ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավանի, Նաիրիի, Երևանի զարդակիրառական արվեստի արհեստագործական պետական ուսումնարաններում**

2016 թվականի ապրիլի 11-ից մայիսի 3-ը և հոկտեմբերի 31-ից նոյեմբերի 11-ը համաձայն ժամանակացույցի ՀՀ Շիրակի մարզի Ամասիայի, Գյումրու հ. 4, ՀՀ Լոռու մարզի Վանաձորի հ. 1, ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավանի, Նաիրիի, Երևանի զարդակիրառական արվեստի արհեստագործական պետական ուսումնարաններում կրթության զարգացման պետական ծրագրի իրականացման, պետական կրթական չափորոշիչների կիրառման, կրթության իրավունքի, կրթական համակարգի սոցիալական երաշխիքների, կրթության որակի բարձրացման և կրթական ծրագրերի յուրացման ապահովման, ինչպես նաև կրթական ծրագրերի իրականացման արդյունավետության գնահատման, կրթության որակի ապահովման նկատմամբ պետական վերահսկողության նպատակով իրականացվել են տեսչական ստուգումներ: Ստուգումների արդյունքում ուսումնական հաստատություններից 4-ում հայտնաբերվել են կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների կատարման խախտումներ, որոնց վերաբերյալ կազմվել է 4 ակտ: Հայտնաբերված խախտումների հետևանքները վերացնելու նպատակով ՀՀ կրթության գլխավոր պետական տեսուչի կողմից տրվել են կատարման համար պարտադիր հանձնարարականներ:

Ըստ ստուգաթերթերի ամփոփ տվյալների՝ ուսումնարանների կրթական գործունեության ռիսկերն ունեն հետևյալ պատկերը (աղյուսակ 1).

աղյուսակ 1

h/h	Ուսումնարանի կրթական գործունեության ռիսկն ըստ ստուգաթերթերի (միավոր)	Ուսումնական հաստատության անվանումը
1.	0	Ամասիայի, Գյումրու հ. 4, Վանաձորի հ. 1, Նաիրիի արհեստագործական պետական ուսումնարաններ
2.	5	Երևանի զարդակիրառական արվեստի արհեստագործական պետական ուսումնարան
3.	13,5	Բյուրեղավանի արհեստագործական պետական ուսումնարան

ՀՀ Շիրակի մարզի Ամասիայի, Գյումրու հ. 4, ՀՀ Լոռու մարզի Վանաձորի հ. 1 արհեստագործական պետական ուսումնարաններում իրականացված ստուգումների արդյունքները ներկայացվել են ՀՀ կրթության պետական տեսչության 2016թ. առաջին կիսամյակի գործունեության վերաբերյալ հաշվետվությունում: ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավանի, Նաիրիի, Երևանի զարդակիրառական արվեստի արհեստագործական պետական ուսումնարաններում իրականացված ստուգումների արդյունքում արձանագրվել են հետևյալ բնույթի խախտումներ (աղյուսակ 2).

աղյուսակ 2

Խախտման բնույթը	Ուսումնական հաստատության անվանումը
Մանկավարժական աշխատողների ընտրություն և նշանակում:	Բյուրեղավանի ա/ու (2), Նաիրիի ա/ու
Արտադրական պրակտիկային հատկացված ժամկետները (շաբաթների թիվը) գերազանցում են պետական կրթական չափորոշիչներով սահմանված ժամկետները (շաբաթների թիվը)	Բյուրեղավանի ա/ու
Բացակայում են պրակտիկաների ուսումնական ծրագրերը	Բյուրեղավանի ա/ու
Բացակայում են մասնագիտությունների ուսումնական պլաններով նախատեսված առարկաների և մոդուլների ծրագրային բովանդակությանը համապատասխանող ուսումնական, մեթոդական և տեղեկատվական նյութերը	Բյուրեղավանի ա/ու
Բացակայում են մասնագիտությունների ուսումնական ծրագրերի պահանջներին համապատասխանող ուսումնական կաբինետները, լաբորատորիաներն ու արհեստանոցները	Բյուրեղավանի ա/ու
Ուսումնարանի տնօրենի հրամանով չի հաստատվել պետական որակավորող հանձնաժողովի անվանական կազմը	Բյուրեղավանի ա/ու
Խախտվել է ուսումնական հաստատության լիցենզիայով սահմանված ընդունելության տեղերի թիվը	Երևանի զարդակիրառական արվեստի ա/ու
Դիմորդների ընդունելությունը ուսումնարան իրականացվել է սահմանված կարգի խախտումով	Երևանի զարդակիրառական արվեստի ա/ու
Յուրաքանչյուր կիսամյակի ավարտից հետո պետական կառավարման լիազորված մարմին հաշվետվություն չի ներկայացվել ուսանողների վերականգնման վերաբերյալ (ուսանողական իրավունքի վերականգնման հիմքը, կրթական ծրագիրը, կիսամյակը, ուսուցման ձևը, մասնագիտությունը)	Երևանի զարդակիրառական արվեստի ա/ու
Ուսումնական տարվա ավարտից հետո պետական կառավարման լիազորված մարմին հաշվետվության չի ներկայացվել ուսանողների տեղափոխման վերաբերյալ (տեղափոխման հիմքը, կրթական ծրագիրը, ուսուցման ձևը, մասնագիտությունը)	Երևանի զարդակիրառական արվեստի ա/ու
Մասնագիտության գծով չեն կնքվել արտադրական պրակտիկայի անցկացման պայմանագրեր	Բյուրեղավանի ա/ու
Դիմորդներից ընդունելության փաստաթղթերն ընդունվել են ընդունելության սահմանված ժամկետի խախտումով	Բյուրեղավանի ա/ու
Ուսումնարանի 2016թ. սովորողների ընդունելության ընդունող հանձնաժողովը ստեղծվել է սահմանված ժամկետի խախտումով	Բյուրեղավանի ա/ու
Դիմորդն ուսումնարան է ընդունվել առանց ներկայացնելու կրթության վերաբերյալ փաստաթղթի բնագիրը և (կամ) պատճենը	Բյուրեղավանի ա/ու
Տարբեր մասնագիտություններով ուսումնարան են ընդունվել դիմորդներ՝ որպես կրթության վերաբերյալ փաստաթուղթ ներկայացնելով ոչ պետական նմուշի դիպլոմներ	Բյուրեղավանի ա/ու
Ուսումնարանի կառավարման խորհուրդը չունի իր կողմից հաստատված աշխատակարգ, չի քննարկել և հաստատել ուսումնարանի ռազմավարական ծրագիրը, ուսումնարանի տնօրենի և մանկավարժների գնահատման իրականացմանն ուղղված միջոցառումները, ուսումնարանում ուսուցանվող յուրաքանչյուր մասնագիտության ուսումնական պլանները և առարկայական ծրագրերի նախագծերը, չի քննարկել և առաջադրել պետական ամփոփիչ ստուգման հանձնաժողովների նախագահների թեկնածությունները, չի հաստատել ուսումնարանի ստորաբաժանումների կանոնակարգերը, ներքին կարգապահական կանոնները, չի սահմանել ուսումնարանում գործող մանկավարժական խորհրդի և ուսումնամեթոդական խորհուրդների կազմը, իրավասությունը և գործունեության կարգը	Բյուրեղավանի ա/ու
Ուսումնարանում չի ձևավորվել ուսանողական խորհուրդ	Երևանի զարդակիրառական արվեստի ա/ու

Ստուգումների արդյունքները ներկայացվել են ՀՀ կրթության և գիտության նախարարին: Տեսչական ստուգումների վերաբերյալ հաշվետվությունները հրապարակվել են [www.edu.am](http://www.edu.am) կայքում:

**Հեղադարձ կապ**

ՀՀ Շիրակի մարզի Ամասիայի արհեստագործական պետական ուսումնարանից ստացված կատարողականի համաձայն՝

1. Ուսումնական հաստատության մանկավարժական կադրերի և մասնագիտական ուսուցման դասախոսների՝ համապատասխան պաշտոններում նշանակումը իրականացվել է սահմանված կարգի համաձայն:

2. Ուսումնական հաստատությունում փաստաթղթերի պահպանումը իրականացվում է սահմանված կարգով:

**3. Ուսումնասիրություններ**

N	Հաստատությունը	Ուսումնասիրության առարկան
1.	ՀՀ Շիրակի մարզի թվով 47 և ՀՀ Սյունիքի մարզի թվով 23 հանրակրթական ուսումնական հաստատություններ	Կրթական գործունեության ուսումնասիրություն
2.	ՀՀ երկրորդ և երրորդ աստիճանի հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններ	Սովորողների ավարտական, պետական ավարտական քննությունների կազմակերպման և անցկացման գործընթացի նկատմամբ վերահսկողություն
3.	ՀՀ թվով 25 նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատություններ	Սովորողների և շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգման, գնահատման, ամփոփիչ ատեստավորման, քննակարգերի, աշխատակարգերի պահպանման գործընթացի ուսումնասիրություն
4.	«Երևանի Խ. Դաշտենցի անվան թիվ 114 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն	Դրսեկության ձևով (էքստեռն) ավարտական քննությունների կազմակերպման և անցկացման գործընթացի նկատմամբ վերահսկողություն
5.	ՀՀ Արարատի, ՀՀ Լոռու և ՀՀ Տավուշի մարզպետարանների կրթության, մշակույթի և սպորտի վարչություններ	Կրթության բնագավառի օրենսդրության պահպանման նկատմամբ պետական վերահսկողություն
6.	ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակի, ՀՀ Արմավիրի մարզի Էջմիածնի, ՀՀ Շիրակի մարզի Արթիկի, ՀՀ Լոռու մարզի Վանաձորի, ՀՀ Սյունիքի մարզի Կապանի, Մեղրիի, Քաջարանի, Ագարակի քաղաքապետարանների աշխատակազմերի կրթության հարցերով զբաղվող	

	ստորաբաժանումներ	
--	------------------	--

### 3.1. Հանրակրթություն

1) ՀՀ Շիրակի մարզի թվով 47 և ՀՀ Սյունիքի մարզի թվով 23 հանրակրթական ուսումնական հաստատությունների կրթական գործունեության ուսումնասիրություններ (2016թ. ապրիլի 6-ից մինչև 30-ը և սեպտեմբերի 28-ից հոկտեմբերի 23-ը)

Ուսումնասիրությունների ընթացքում կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ են հայտնաբերվել թվով 66 դպրոցներում (ՀՀ Շիրակի մարզում՝ 44, ՀՀ Սյունիքի մարզում՝ 22): Հայտնաբերված խախտումների վերաբերյալ կազմվել է ընդհանուր թվով 66 արձանագրություն: Հայտնաբերված խախտումները և դրանց հետևանքները վերացնելու նպատակով ՀՀ կրթության գլխավոր պետական տեսուչի կողմից դպրոցների տնօրեններին և կառավարման խորհուրդների նախագահներին տրվել են կատարման համար պարտադիր հանձնարարականներ:

Ուսումնական հաստատություններում իրականացված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է.

Տնօրենը սահմանված կարգով չի իրականացրել մանկավարժական կադրերի ընտրությունը (համաձայն պաշտոնների անվանացանկի և պաշտոնի նկարագրի) դպրոցներից 55-ում՝ ընդհանուր թվով 179 խախտում (ՀՀ Շիրակի մարզի թվով 37 դպրոցներում՝ 119, ՀՀ Սյունիքի մարզի թվով 18 դպրոցներում՝ 60 խախտում):

Խախտվել են ուսուցչի թափուր տեղի մրցույթի կարգի պահանջները 25 դպրոցներում (ՀՀ Շիրակի մարզի թվով 16, ՀՀ Սյունիքի մարզի թվով 9 դպրոցներ):

Ուսուցիչն ընդունվել է աշխատանքի՝ առանց ուսուցչի թափուր աշխատատեղը համալրելու համար մրցույթ հայտարարելու 19 դպրոցներում (ՀՀ Շիրակի մարզի 13, ՀՀ Սյունիքի մարզի 6 դպրոցներ):

Կառավարման խորհուրդը՝

- հավանություն չի տվել դպրոցի զարգացման ծրագրին (ՀՀ Շիրակի մարզի 3 դպրոցներ),
- վերահսկողություն չի իրականացրել ուսումնական հաստատության զարգացման ծրագրի կատարման նկատմամբ (ՀՀ Շիրակի մարզի 8, ՀՀ Սյունիքի մարզի 3 դպրոցներ),
- չի հաստատել իր աշխատակարգը (ՀՀ Շիրակի մարզի 9, ՀՀ Սյունիքի մարզի 2 դպրոցներ),
- չի հաստատել իր ժամանակացույցը (ՀՀ Շիրակի մարզի 9, ՀՀ Սյունիքի մարզի 3 դպրոցներ),
- չի քննարկել ուսումնական հաստատության ամենամյա ծախսերի նախահաշիվը, հաջորդ տարվա բյուջետային ֆինանսավորման հայտը, ֆինանսատնտեսական գործունեության հաշվետվությունը (ՀՀ Շիրակի մարզի 7, ՀՀ Սյունիքի մարզի 1 դպրոցներ),
- չի քննարկվել ուսումնական հաստատության տարիֆիկացիոն ցուցակը (ՀՀ Շիրակի մարզի 1, ՀՀ Սյունիքի մարզի 1 դպրոցներ),
- չի հաստատել դպրոցի ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի կարգը (ՀՀ Շիրակի մարզի 8, ՀՀ Սյունիքի մարզի 1 դպրոցներ),



- նիստերը գումարել է սահմանված կարգի խախտումով (**ՀՀ Շիրակի մարզի 6, ՀՀ Սյունիքի մարզի 1 դպրոցներ**),
  - խորհրդի անդամի լիազորությունները սահմանված կարգով չեն դադարեցվել (**ՀՀ Շիրակի մարզի 1, ՀՀ Սյունիքի մարզի 1 դպրոցներ**),
  - չի քննարկել ուսումնադաստիարակչական գործունեության հաշվետվությունները (**ՀՀ Շիրակի մարզի 3, ՀՀ Սյունիքի մարզի 2 դպրոցներ**),
  - խորհրդի կազմում ծնողական խորհրդի կողմից որպես անդամ առաջադրված անձը նշված դպրոցում ներկայումս սովորող երեխա չունի (**ՀՀ Շիրակի մարզի 2 դպրոցներ**),
  - չի հաստատել ուսումնական հաստատության ներքին կարգապահական կանոնները (**ՀՀ Շիրակի մարզի 1 դպրոց**),
  - չի քննարկել ներքին գնահատման արդյունքները (**ՀՀ Շիրակի մարզի 3, ՀՀ Սյունիքի մարզի 1 դպրոցներ**),
  - սահմանված ժամկետում չի իրականացրել տնօրենի թափուր տեղի համար մրցույթ (**ՀՀ Շիրակի մարզի 1, ՀՀ Սյունիքի մարզի 1 դպրոցներ**),
  - տնօրենի թափուր տեղի համար մրցույթ անցկացնելու մասին որոշումը կայացրել է սահմանված ժամկետի խախտումով (**ՀՀ Շիրակի մարզի 2, ՀՀ Սյունիքի մարզի 2 դպրոցներ**),
  - նոր անդամների առաջադրումը կատարվել է սահմանված կարգի խախտումով (**ՀՀ Շիրակի մարզի 1 դպրոց**),
  - տնօրենի թափուր տեղի համար մրցույթի հայտարարությունը տրվել է սահմանված ժամկետի խախտումով (**ՀՀ Շիրակի մարզի 1 դպրոց**),
  - տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը չի հրապարակել զանգվածային լրատվության միջոցներով (**ՀՀ Սյունիքի մարզի 1 դպրոց**),
  - խորհրդի կազմի փոփոխությունը կատարվել է սահմանված ժամկետի խախտումով (**ՀՀ Շիրակի մարզի 1, ՀՀ Սյունիքի մարզի 1 դպրոցներ**):
- Ծնողական խորհրդի անդամը ընդգրկվել է հաստատության ծնողական խորհրդի կազմում և առաջադրվել որպես կառավարման խորհրդի անդամ (**ՀՀ Շիրակի մարզի 1 դպրոց**):
- Ուսումնական աշխատանքի գծով տեղակալի ուսումնական ծանրաբեռնվածությունը չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջին (**ՀՀ Շիրակի մարզի 2 դպրոցներ**):
- Տնօրենի՝ ուսումնական աշխատանքի գծով տեղակալը չի ներկայացրել առաջարկություններ ուսումնադաստիարակչական գործընթացի կատարելագործման բարձրացման ուղղությամբ (**ՀՀ Շիրակի մարզի 2 դպրոցներ**):
- Տնօրենի՝ ուսումնական աշխատանքի գծով տեղակալը վերահսկողություն չի իրականացրել դասավանդման որակի նկատմամբ (**ՀՀ Շիրակի մարզի 1 դպրոց**):
- Մանկավարժական խորհուրդը՝
- նիստերը չի գումարել սահմանված կարգին համապատասխան (**ՀՀ Շիրակի մարզի 1, ՀՀ Սյունիքի մարզի 1 դպրոցներ**),
  - մանկավարժական խորհուրդը ձևավորվել է սահմանված կարգի խախտումով (**ՀՀ Շիրակի մարզի 1, Սյունիքի մարզի 1 դպրոցներ**),

- վերազանցել է իր իրավասությունները (**ՀՀ Շիրակի մարզի 1 դպրոց**),
  - չի քննարկել ուսումնական հաստատության զարգացման ծրագիրը և չի երաշխավորել այն խորհրդի հաստատմանը (**ՀՀ Շիրակի մարզի 3, ՀՀ Սյունիքի մարզի 1 դպրոցներ**),
  - որոշում չի ընդունել ուսումնական հաստատության ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի ժամաքանակի բաշխման մասին (**ՀՀ Սյունիքի մարզի 1 դպրոց**),
  - չի քննարկել կարգապահական տույժի ենթարկված սովորողների հարցը (**ՀՀ Շիրակի մարզի 3, ՀՀ Սյունիքի մարզի 1 դպրոցներ**),
